ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«02» դեկտեմբերի 2020 թվականի N 261

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Հ. Մաթևոսյանին

Հարգարժան պարոն մարզպետ.

Ձեզ է ներկայացվում 2020 թվականի նոյեմբեր ամսին Հացիկ համայնքի ղեկավարի կողմից ընդունված որոշումները: Նշված ժամանակահատվածում ընդունվել է 5 որոշում: Առդիր 7 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Եղիազարյան

02.12.2020թ.
գ. Հացիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«30» նոյեմբերի 2020 թվականի

ՈՐՈՇՈՒՄ N 61

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ՇԵՆՔ –ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿՈՏԻԿ ՔՈՉՈՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Իգիթ Քալաշյանը դիմել է Արմավիրի մարզ գյուղ Հացիկ 17-րդ փողոց 2-րդ փակուղի 4 բնակելի տուն հասցեում գտնվող 1200 քառ. մ օրինական տնամերձ հողամասի վրա կառուցված բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ իրավունքների վերականգնելու խնդրանքով, որը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը և օժանդակ շինությունները կառուցվել են մինչև 15.05.2001թ., հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չի խախտում այլ անձանց իրավունքները, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով.

Որոշում եմ

1. Վերականգնել Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 17-րդ փողոց 2-րդ փակուղի 4 բնակելի տուն հասցեում գտնվող ըստ ժառանգության իրավունքի վկայագրի ձեռք բերված (ժառանգական գործ թիվ 599, գրանցամատյան թիվ 4240) գույքային միավորների նկատմամբ քաղաքացիներ Կոտիկ Քյարամի Քոչոյանի (ծնված 05.04.1966 թվականին), Ասքանազ Քյարամի Քոչոյանի (ծնված 05.01.1964թ.) և Թեմուր Ասքանազի Ավդոյանի (ծնված 27.05.1989թ.) գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 1200քառ. մ տնամերձ հողամասի վրա գտնվող թիվ 1 բնակելի տան՝ 167.3 քառ. մ (կառուցված 1985 թ.) բնակելի տան՝ 177.0 քառ. մ (կառուցված 1985թ.), աստիճանի՝ 8.6 քառ. մ (կառուցված 1985թ.), բաց պատշգամբի՝ 13.20 քառ. մ (կառուցված 1985 թ.), թիվ 3 բնակելի տան՝ 86.40 քառ. մ (կառուցված 1965թ.) և թիվ 4 պարսպի՝ 1.99 քառ. մ (կառուցված 1985թ.), նկատմամբ:
2. Թիվ 2 զուգարանը՝ 2.6 քառ.մ (կառուցված 2014թ.) համարել ինքնակամ:

3. 04-058-048-011 ծածկագրով 1200 քառ.մ հողամասին կից 240 քառ.մ ավել տարածքը, որը չի գերազանցում տնամերձ հողամասի 20%-ը, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, սեփականության իրավունքով հատկացնել անհատույց Կոտիկ Քյարամի Քոչոյանին, Ասքանազ Քյարամի Քոչոյանին և Թեմուր Ասքանազի Ավդոյանին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքում համայնքային սեփականություն հանդիսացող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 17 փողոց 2 փակուղի թիվ 4 բնակելի տուն հասցեում գտնվող Կոտիկ Քյարամի Քոչոյանի, Ասքանազ Քյարամի Քոչոյանի և Թեմուր Ասքանազի Ավդոյանի տնամերձ հողամասին կից 1249 քառ.մ բնակավայրի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքի կարգով վաճառել Կոտիկ Քյարամի Քոչոյանին, Ասքանազ Քյարամի Քոչոյանին և Թեմուր Ասքանազի Ավդոյանին, քանի որ նրանք 1991 թվականից սկսած օգտագործել և բարեխղճորեն վճարել են իրենց տնամերձ հողամասից ավել 1249 քառ.մ հողամասի հարկերը:
5. Վաճառվող հողամասի արժեքն է՝ (1249x222)x30%=83183.4 ՀՀ դրամ
ա) 1249 քառ.մ բնակավայրի նպատակային նշանակության բնակելի տան կառուցապատման բնակավայրի հողատեսքի համար վճարել 83183.4 ՀՀ դրամ:
6. Առաջարկել ՀՀ ԿԱ Ա.Գ.Կ.Պ.Կ. համապատասխան տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Կոտիկ Քյարամի Քոչոյանի (ծնված 05.04.1966 թվականին), Ասքանազ Քյարամի Քոչոյանի (ծնված 05.01.1964թ.) և Թեմուր Ասքանազի Ավդոյանի (ծնված 27.05.1989թ.) գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված տնամերձ հողամասի և շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
7. Սույն որոշման ընդունման օրվանից 30-օրյա ժամկետում ավել հողամասի գնման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
8. Համայնքի ղեկավարի 09.10.2020 թվականի թիվ 53 որոշումը համարել անվավեր:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

գ.Հացիկ 30.11.2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«25» նոյեմբերի 2020 թվականի

ՈՐՈՇՈՒՄ N 60

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի հուլիսի 3-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին» N7 որոշումը,

Որոշում եմ

1. Քաղաքացի Արևհատ Եղիազարյանին պատկանող 04-058-162-028 ծածկագրով գյուղատնտեսական արտադրական նշանակության հողամասին տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 16-րդ փողոց 1 նրբանցք 2 հողամաս:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Եղիազարյան

գ. Հացիկ

25.11.2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
nacikiguxapetaran@inbox.ru

«16» նոյեմբերի 2020 թվականի

ՈՐՈՇՈՒՄ N 59

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8, 8.1, 10, 11-րդ կետերով, 13-րդ կետի,ծ «ա» և «բ» ենթակետերով, 22.1 կետով և հիմք ընդունելով կառույցն իրականացրած անձ Դրաստամատ Գալստյանի դիմումը

Որոշում եմ

1. Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 1 փողոցի թիվ 12 տուն հասցեում գտնվող և սեփականության իրավունքով (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, տրված 29.07.2020 թվականի գործ թիվ 428, գրանցամատյան թիվ 3694) Դրաստամատ Գալստյանին պատկանող 0.1136 հա բնակավայրի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ 2020 թվականին կառուցված 122.85 քառ. մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, 66.2 ք.մ ընդհանուր արտաքին մակերեսով օժանդակ շինությունը և 18.3 ք.մ պարիսպը և 1976 թվականին կառուցված 16.4 ք.մ ներքին մակերեսով անաանաշենքը ճանաչել օրինական:
2. Ընդունել ի գիտություն, որ
   1/ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը
   2/ շինությունները կառուցված չեն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. 04-058-013-009 ծածկագրով 0.08 հա հողամասին կից 0.016 հա ավել տարածքը, որը չի գերազանցում տնամերձ հողամասի 20%-ը, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու

իրավունք, համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, սեփականության իրավունքով հատկացնել անհատույց Դրաստամատ Գալստյանին:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքում համայնքային սեփականություն հանդիսացող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 1 փողոց թիվ 12 տուն հասցեում գտնվող Դրաստամատ Գալստյանի տնամերձ հողամասին կից 0.0176 հա բնակավայրի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքի կարգով վաճառել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի բնակիչ Դրաստամատ Գալստյանին, քանի որ նա 1991 թվականից սկսած օգտագործել և բարեխղճորեն վճարել է իր տնամերձ հողամասից ավել 0.0176 հա հողամասի հարկերը:

5. Վաճառվող հողամասի արժեքն է՝ (176x222)x30%=11721.6 ՀՀ դրամ
ա) 0.0176 հա բնակավայրի նպատակային նշանակության բնակելի տան կառուցապատման բնակավայրի հողատեսքի համար վճարել 11721.6 ՀՀ դրամ:

6. Հողամասի սեփականատերը սույն որոշման ընդունման օրվանից 30-օրյա ժամկետում Հացիկ համայնքի բնուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաշվարկված բնակելի տան համար 122.85քմx555=67568 ՀՀ դրամ, օժանդակ շինությունների համար՝ 66.2քմx550x0.6=21846 ՀՀ դրամ, պարսպի համար 18.3քմx550=10065 ՀՀ դրամ ընդամենը 99479 ՀՀ դրամ օրինականացման վճարը, իսկ անասնաշենքը կառուցված մինչև 2001 թվականի մայիսի 15-ը օրինականացնել առանց վճարի:

7. Իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

8. Սույն որոշման ընդունման օրվանից 30-օրյա ժամկետում օրինականացման և ավել հողամասի գնման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

9. Համայնքի ղեկավարի 01.10.2020 թվականի թիվ 50 որոշումը համարել անվավեր:

10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման ՀՀ Կադաստրի Կոմիտեի համապատասխան ստորաբաժանման կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Եղիազարյան

գ. Հացիկ 16.11.2020թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«05» նոյեմբերի 2020 թվականի

ՈՐՈՇՈՒՄ N 58

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի հուլիսի 3-ի թիվ 7 որոշումը

Որոշում եմ

1. Արմավիրի մարզի Հացիկ համայնքի բնակիչ՝ այժմ հանգուցյալ Արարատ Կարապետի Շաբոյանին պատկանող 04-058-032-008 ծածկագրով տնամերձ հողամասի վրա գտնվող բնակելի տանը տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 2-րդ փողոց 28/3 բնակելի տուն:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Եղիազարյան

գ.Հացիկ 05.11.2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«03» նոյեմբերի 2020 թվականի

ՈՐՈՇՈՒՄ N 57

ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի հուլիսի 3-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին» N7 որոշումը,

Որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի բնակիչ Վարուժան Գալուլյանին պատկանող 04-058-005-005 ծածկագրով տնամերձ հողամասին տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 9-րդ փողոց 10 տնամերձ հողամաս:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Եղիազարյան

գ. Հացիկ

03.11.2020թ.